ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1807 20.04.2018թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 15-ին Դիտորդական խումբն այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Լոռու ՄՎ Տարոնի ՁՊՎ արձանագրել է.

Թերություններ՝

1. Լոգարանում ցնցուղը պոկված էր, տաք ջրի պտուտակը չէր աշխատում, որի հետևանքով հնարավոր չէր ՁՊՎ-ում լոգանք ընդունել: Դիտորդական խմբի անդամները, երբ ներկայացրեցին խնդիրը, հերթապահ մասի պետը Դիտորդներին նկատողություն արեց, ասելով՝ մեջբերում ենք <<Դուք Դիտորդ եք, թե ջրմուղի աշխատող>>: Ավելին՝ ներկայացրել է իր դիտարկումները, որ ցնցուղը և ջրի ծորակի պտուտակը աշխատում էր, այն դեպքում, որ ցնցուղը Դիտորդների ներկայությամբ արդեն վերանորոգել էին, բայց ստելով, պնդում էին որ աշխատում էր:

2. ՁՊՎ-ն ամբողջությամբ գտնվում էր խոնավ վիճակում: Պատճառը՝ ոստիկանության բաժնի տանիքը վերանորոգել են, սակայն անձրևաջրերի հեռացման ջրատարը չկար, որի արդյունքում ոստիկանության բաժնի ամբողջ անձրևաջրերը թափվում են զբոսաբակ ամբողջ երկարությամբ և խոնավացնում են ՁՊՎ-ի ընդհանուր տարածքը: Ըստ Դիտորդական խմբի՝ պատճառը տանիքի վերանորոգման թերի աշխատանքի արդյունք է: Կարելի է նկատել, որ ՁՊՎ-ն անգամ շահագործման ենթակա չէ, խոնավության բարձր աստիճանի պատճառով:

3. Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ ՁՊՎ-ի 2-րդ խցում անձ էր պահվել և Դիտորդների այցելության օրը՝ 15.04.2018թ-ի ժամը 08.45-ի դրությամբ խուցը հավաքված և մաքրված չէր, այն դեպքում, երբ վերջին մարդը ՁՊՎ-ից դուրս է եկել 14.04.2018թ ժ. 14.20: Աղբամանը կեղտոտ էր, իսկ աղբը տոպրակով դրված էր խցում:

ՀՀք.Գյումրի 3123,Կ.Սարգսյան 13 Հեռ./ֆաքս: (+374 77) 86 99 66
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1035
«02» 05 2018թ.

Նշված անձը տվյալ խցում պահվել էր 3 օր՝ 11.04.2018թ-ից, բայց սպիտակեղենը մեր ներկայությամբ հանեցին, որը բացարձակ օգտագործված չէր:

Հերթապահ մասի պետը դիտարկում է արել, որ ձերբակալվածը իրեն հատկացված սպիտակեղենը ծալված վիճակում դրել է մահճակալի վրա և ՁՊՎ-ից դուրս է եկել 14.04.2018թ-ի ժամը 21.15-ին, այն դեպքում, որ տվյալ անձը ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ-ից դուրս է բերվել, նույն օրը՝ ժամը 14.20-ին:

Եվս մեկ անգամ պնդում ենք, որ սպիտակեղենը ոչ թե կոկիկ ծալված դրվածի վերաբերյալ է խնդիրը, այլ այն, որ բացարձակ օգտագործված չէր և փաստերը ապացուցում են, որ հերթապահ մասի պետը պարզապես ստում է:

4. Բուժսենյակում առկա հիգիենիկ սավանը գտնվում էր սարսափելի վատ վիճակում, իսկ բուժսենյակը գտնվում էր ամբողջությամբ փոշոտ վիճակում:

Խախտումներ՝

1. Ա.Ժ.Ն-ն ըստ <<Ձերբակալված անձանց հաշվառման>> գրանցամատյանի բերման է ենթարկվել 22.02.2018թ-ին ժ. 00.05: ՁՊՎ է ընդունվել նույն օրը՝ ժամը 02.15: Գրառումը կատարվել է ջնջումներով, որը ենթակա է պարզաբանման: Ավելացնենք, որ ընդհանուր գրանցամատյաններում ջնջումները՝ ամսաթվերի, ժամերի փոփոխությունները կրում է համատարած բնույթ:

2. Խափանման միջոցի հարցը քննարկելու նպատակով ՁՊՎ-ից անձին դատարան տեղափոխելուց անձի անձնական գործը նրա հետը չեն տեղափոխում, այլ, երբ անձը կալանավորվում է նոր գալիս են անձնական գործը վերցնում են և տեղափոխում ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկ: Իսկ երբ անձը ազատ է արձակվում, ապա ազատ արձակման որոշումն են ներկայացնում ՁՊՎ: Օրինակ՝ Ա.Ս.Մ.-ն 14.04.2018թ-ին ժամը 14.20-ին տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան և ըստ հերթապահ մասի պետի նրա անձնական գործը եկել ստացել են ուղեկցողները, նույն օրը ժամը 21.15-ին, որպեսզի կարողանան նրան տեղափոխեն ՀՀ ԱՆ ՔԿ հիմնարկ: Իսկ ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման գրանցամատյանում նրա հետագա քայլերի վերաբերյալ գրառումները բացակայում են, որովհետև եթե անգամ նշվեր որ անձը ՔԿՀ է տեղափոխվել 14.04.2018թ-ին ժամը 21.15-ին արդյունքում խախտվում էր նրա ձերբակալման առավելագույն ժամկետը և այդ իսկ պատճառով գրանցամատյանի տվյալ հատվածում գրառում կատարված չէ:

առավելագույն ժամկետը լրանալուց հետո, դատավորը տվյալ անձին ազատ է արձակել, որից հետո տվյալ անձը ազատ է արձակվել, և այնուհետև ազատ արձակվածի կարգավիճակով շարունակել է դատական նիստը և կալանավորել է:

3. <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում անձանց բուժզննության և բուժօգնություն տրամադրելու ժամերը չեն նշվում:

   Հերթապահ մասի պետի բանավոր մեկնաբանությամբ գրանցամատյանում չի պահանջում ժամերը նշելը, բայց որոշ դեպքերում նշված է, որոշ դեպքում ոչ: Անհասկանալի է նման մեկնաբանությունը: Եթե չենք կատարում համապատասխան գրառումը, ապա չենք կատարում:

Անհրաժտության դեպքում կարող ենք տրմադրել փաստերը հաստատող բոլոր գրառումները:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Հովհաննիսյան